

## ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

### ՈԳԵԽԱԲԿԱՆՔ

Ինչ մեր ոգին է քառսից շահում,  
այն ապրողներին պետք կգա մի օր,  
թեկուզ դա լինի ձանձրույթ կամ անդոհ,  
կլուծվի մարդոց արյան մեջ՝ մարմնում,  
կամոքի նրանց, կտանի հեռուն:

Ինչ մեր օրերի լեղին է ցնկնում՝  
խեղված մտառում, զգացում թերատ,  
այն ապրողներին պետք կգա հաստատ,  
գիրթ ու դժպատեհ դա լինի թեկուզ՝  
կնշի ուղին անթեք, անխանդակ:

Այսպես պիտ քայլենք մերկանդամ ու բոկ՝  
գայթելով մեկ աջ ու մեկ էլ ահյակ,  
սողեսող տալով, ոստնելով ընդոստ,  
անդամահատենք և՛ սյուն և՛ խոյակ  
աստվածահաճո ցասումով ըմբոստ:

Պիտի ընդունենք ողջակեզն հանուրց՝  
ծնվող-մեռնողին երանի տալով,  
մեռնող-հառնողին երկիր պագելով,  
որպեսզի հսկենք սահմանը բանուկ  
գոյի-չգոյի, կենաց և մահու:

Արդ՝ չկործանել ոչ մի Կանգուն բան,  
այն, ինչ կանգուն է, թող հարատևի,  
ինչ Անցողիկ է թող լինի կործան.  
միաձուլումը զույգ բևեռների  
կտա դասական կերպը գոյության:

Կյանքը, որ հավերժ ընթացք է միգուն,  
զժղմնող ցասում ու քնքշանույշ դող,  
իր հուռթի ու կեզ կտղանքում պագշոտ  
սերունդների երթն է հար կամրջում՝  
դիեցիկ մանկանց ծնունդով շենշող:

Ինչ մեր ոգին է քառսից շահում,  
այն ապրողներին պետք կգա մի օր,  
թեկուզ դա լինի ձանձրույթ կամ անդոհ,  
կլուծվի մարդոց արյան մեջ՝ մարմնում,  
կամոքի նրանց, կտանի հեռուն:

## ԱՐԱՐՉԱԿԱՆ

Արարունից առաջ՝ ոչ մի զոհասեղան,  
Լռություն է եղել, երկարատև ու ջինջ,  
Չետո ինչպես եղավ... հետո ինչե՛ր չեղան,  
Լույսը ճեղքվեց հանկարծ, ձգվեց-ձգվեց մի ճիչ:

Այդ ճիչը դուրս թռավ ու մխրճվեց հողում,  
Խրվե՛ց, թաղվե՛ց, հանգա՛վ, շունչը պահեց մի պահ,  
Ու երբ հրաշք-մանկան արցունքների ծովում  
Խեղդամահ էր լինում՝ նրան լույսը դիպավ:

Եվ ընդհատվեց ճիչն այդ, երբ որ մարդը խոսեց,  
Սղոց դիպավ ասես երջանկության կաղնուն,  
Եվ որտեղի՛ց որտեղ արևներից պոկվեց՝  
Լույսը եկավ չոքեց, դեմ առավ անկողնուն:

Եվ այդ ճիչը հիմա մենք կրում ենք մեր մեջ,  
Մեր արյան մեջ նրա արձագանքն է փթթում,  
Ու երբ ցավից հարբած հառաչում ենք անվերջ,  
Փրկությունը դարձյալ նրա մեջ ենք գտնում:

Ամենայն մարդ մի ճիչ ու մի թաքուն հառաչ,  
Ո՞վ արձակեց սակայն, արարիչը ո՞վ էր.  
Ես տեսնում եմ միայն դաշտերի մեջ կանաչ  
Լռություն մի անխախտ ու թափանցիկ հովեր...